

ՏՈՔԹ. ԿԱՅԱԳՆ ԱԴԱՄԵԱՆ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Տոքթ. Վահագն Ադամեանի անունը սերտորեն կ'առնչուի ասպնջական կիպրոսի, կիպրահայուսթեան եւ Մելգոնեան կրթական Հաստատութեան հետ: Քանի մը ամիս առաջ, նախկին ներկայացուցիչ (երեսփոխան) Պետրոս Գալաթեանի անժամանակ մահուրնէ ետք, Տոքթ. Վ. Ադամեան կիպրահայ գաղութի կողմէ ընտրուեցաւ Պետական ներկայացուցիչ կիպրոսի Խորհրդարանէն ներս: Մինչ այդ, Տոքթ. Ադամեան արդէն ունէր Հասարակական դարձունէութիւն թէ՛ որպէս մելգոնեանցի եւ թէ՛ որպէս ՀԲԸՄիութեանկան: Ան յաճախած է ՀԲԸՄ-ի Մելգոնեան կրթական Հաստատութիւնը եւ սիրուած թփփղ մըն է համայնքէն ներս:

Վերջերս Տոքթ. Վ. Ադամեան հիւրաբար կը գտնուէր Լոս Անճելըս, ուստի առիթովն օգտուելով հետեւեալ շահեկան հարցազրոյցը ունեցանք իրեն հետ:

Հարցում.- Պրն. Վ. Ադամեան, որպէս հայուսթեան ներկայացուցիչ, որո՞՞նք են կիպրահայ գաղութի հիմնական մարտահրաւրքները:

Պատասխան.- Ներկայիս կիպրոսի հայութեան ամէնէն առաջնային մարտահրաւրքը, կամ խնդիրը, Մելգոնեան կրթական Հաստատութեան հարցն է, արդէն դատական հայց մը կայ, այսինքն դատարանին ձգուած է որոշում առնելը: Իմ առաքելութիւնս կը նկատեմ քաղաքական եւ բարեկամական գեանի վրայ լուծում մը գտնալ այս հարցին: Երբեք չեմ փափաքիր որ ՀԲԸՄ-ը վնասէ, որովհետեւ այս Միութիւնը տարիներով աշրուսթիւն բրած է, բարեկործութիւն կատարած է, ստիկա սեւէ մէկը չի կրնար ուրանալ, քայց ՄԿՀ-ը փակելը սրալ քայլ մըն է, ասիկա իմ կարծիքս է, որովհետեւ ես ալ արմատներով մելգոնեանցի մը եղած եմ, հետեւաբար պիտի աշխատիմ որ, ինչպէս ըսի, քաղաքական եւ բարեկամական լուծում մը գտնեմ:

Հ.- Կիպրոսի՞ Եւրոմիութեան անդամ ընտրուելէ ետք, ի՞նչ Աոր մարտահրաւրքներ ունեցաւ կիպրահայութիւնը:

Պ.- Եւրոպայի Միութեան մէջ մտնելէ ետք մեզի հայերուս համար, շատ աւելի լաւ պայմաններ ստեղծուած են: Մարտահրաւրքներ չեն աւելցուած, այլ աւելի լաւ պայմաններ ստեղծուած են: Արդէն, պէտք է ընդգծեմ, կիպրոսի անկախութենէն ի վեր,

բոլոր բարեխնամ կառավարութիւնները գորգուրանք ցոյց տուած են հայ գաղութին, իսկ այժմու կառավարութիւնն ալ ուժգնապէս թիկունք կը կենայ մեզի ՄԿՀ-ի հարցին մէջ, հետեւաբար Եւրոմիութիւնն ալ իր կարգին կը պաշտպանէ մեր գաղութը, ինքնութիւնը եւ մշակոյթը (Protected Languages):

Հ.- Վերադառնալով ՄԿՀ-ին, ինչպէ՞ս կը գնահատէ՞ կիպրահայ գաղութի վերաբերմունքն ու կեցուածքը ՄԿՀ-ի խնդրին մէջ:

Պ.- Ես կը կարծեմ թէ կիպրոսի հայ գաղութը մեծամասնութեամբ ՄԿՀ-ի կողքին կեցած է սարինելու ընթացքին եւ այժմ Բայց, պէտք է նշեմ նաեւ, որ փոքրամասնութիւն մըն ալ ունինք որ անտեսուած է ՄԿՀ-ը կամ անտարբեր դտնուած է, սակայն յանկարծ, վերջին շրջանիս, անոնցմէ ոմանք մէջտեղ կ'աւ են զգրուցը «փրկելու առաքելութեամբ»:

Հ.- Անցնինք արտաւերժ Բաղաճականութեան: Հիմա որ ունինք Հայաստանի (անկախ) Հանրապետութիւն, որ աւելի անկախ արտաւերժ ազգային Բաղաճականութիւնը կը վարէ, որպէս կիպրոսի Խորհրդարանի անդամ, ինչպէ՞ս կը գնահատէ՞ կիպրոս-Հայաստան յարաբերութիւնները՞ Աոր գարգացումներու լոյսին տակ:

Պ.- Լաւ հարցում է: Վերջերս հրատարուած էի հայրենիք Հայաստանի Խորհրդարանի (Ազգային Ժողով) հիմնադրութեան 15-ամեակի առթիւ: Ռեքեմն ես, որպէս ներկայացուցիչ, կիպրոսի Խորհրդարանի պատգամը փոխանցեցի Հայաստանի Ժողովուրդին: Պատգամը կը բաղկանար երեք կէտերէ, առաջին թուրքիս, եթէ կը փափաքի Եւրոպայի Միութեան լիիրաւ անդամ ըլլալ, այդ մեծ ընտանիքին մաս կ'ազմել, շատ մը պայմաններ պէտք է լրացնէ, անոնցմէ մէկն այն է, որ թուրքիս պէտք է ճանչնայ կիպրոսը որպէս Եւրոպայի անդամ երկիր, երկրորդ թուրքիս պէտք է ճանչնայ Հայոց Ենդամանութիւնը, եւ երրորդ թուրքիս պէտք է իր սահմանները բանայ բոլոր այն երկիրներուն, որոնց հետ սահման ունի Հայաստանի Ազգային Ժողովն ու Ժողովուրդը մեծ գոհունակութեամբ ընդունեցին կիպրոսի պատգամը: Մեր երկու պետութիւններու յարաբերութիւնները աւելի՞ քան

բարեկամական են, եւ մենք պիտի աշխատինք աւելի սերտացնել ու խորացնել մեր յարաբերութիւնները բոլոր բնագաւառներէ ներս:

Ը.- Հիմա որ անորոշ ժամանակով փակ են ՄԿԷ-ի դռները, տեսակ մը պարապօրէիւն ստեղծուեցաւ, մ'ա՛նաւանդ վնասեց հայեցի կրթութիւնը երկրորդականի մակարդակի վրայ: Նարեկ Ազգային Վարժարանը (նախակրթարան) աւարտել է տէր, ինչպէ՞ս կը փորձէ՞ գլ.ք մասամբ հոգայ հայ նոր սերունդի հայեցի կարի՛ճները:

Պ.- Երբ որ յատկացան ՄԿԷ-ի փակման շուրթերը, մենք, որպէս Նարեկ Ազգային Վարժարաններու հոգարարութիւն, անմիջապէս գործի անցանք, սրբաւ գլխայինք ազգին առջև, որպէսզի մեր պատկերներուն կարենանք աւանդել հայեցի կրթութիւն, հայ մշակոյթ ու հայերէն: Որտա՞ր եմ բանել թէ երկու ամսուան մէջ, կիպրոսի յարեխնամ կառավարութիւնը մեզի ամէն միջոց պրամապրեց, որպէսզի Նարեկ Վարժարանի յարկին տակ ունենանք մեր դասարանները (12-15 տարեկան սշակերաններու համար) եւ մեր պատկերներուն կարենանք դասուանդել հայերէն, հայոց պատմութիւն եւ մշակոյթ՝

միջնակարգ դպրոցի միւս անհրաժեշտ դասերու գուզընթաց կառավարութիւնը շուտով եւ սիրալոյսաբար կերպով ընդառաջեց մեր փափաքին: Այսպիսով մենք ունինք մեր «Կիմնապիտուր» Նարեկի յարկի տակ, փորձառու առաջնորդութեամբ մեր անօրէնին՝ Պրն. Զարութիւն Այվապեանին:

Ը.- Տո՛ւք. Վ. Աղաման, ապիկա ձեր առաջին այցելութիւնն է մեր գաղութը, ուր ունի՞ր դասընկերներ, յարեկամներ եւ նախկին ուսուցիչներ. ինչպէ՞ս ընդունեցին ձեզ:

Պ.- Ի հարկէ յուզուած եմ, հիմա այ յուզուած եմ երբ ձեզի հետ այս հարցազրոյցը կ'ունենամ իրրեւ հին ծանօթ մը: Շատ սրտամօտ կը գրամ այս գաղութին, որուն հետ թէ՛ կիպրոսահայ եւ թէ՛ մեզ գոնեանախան քաղցր յուշերով կապուած եմ - իմ բարեկամներէս եւ սրտցաւ ընկերներէս շատեր հոս են եւ հարապատի պէս ընդունեցին զիս: Այսօր ալ, էբ կը նշենք Մելիօնեան բարերայնեացու զըր, ինչպէս անցեալին կիպրոսի մէջ, շրջապատուած եմ ինծի համար շատ սիրելի ընկերներով, դասընկերներով, ուսուցիչներով եւ բարեկամներով:

Հարց-ազրոյցը վարեց

ՄԻՆԱՍ ԳՈՏԱՅԵԱՆ